ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՊՀ-ՈՒՄ ԷՐ

Մայիսի 21-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի պատվիրակությունն այցելել է Արցախի պետական համալսարան և հանդիպում ունեցել համալսարանի ստորաբաժանումների պատասխանատուների հետ:

Պատվիրակության կազմում էին ՀԱՀ գրադարանի տնօրեն Սաթենիկ Ավագյանը, ՏՏ ոլորտի մասնագետներ Գայանե Սարգսյանը, Լևոն Խաչատրյանը, գրանցման բաժնի պետ Շաղիկ Արծրունին:

Այցի նպատակն էր ԱրՊՀ հիմնանորոգված շենք տեղափոխվելու հետ կապված բուհում նոր ծրագրեր ներդնելու գործում մասնագիտական և այլ աջակցություն ցուցաբերելու աշխատանքների քննարկումն ու ճշգրտումը:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով ՀԱՀ ներկայացուցիչներին, շնորհակալություն է հայտնել նրանց՝ ԱրՊՀ այցելելու և համագործակցելու համար՝ կարևորելով ՀԱՀ դերը ԱրՊՀ զարգացման գործում:

ՀԱՀ գրադարանի տնօրեն Սաթենիկ Ավագյանը համալսարանականներին է ներկայացրել հիմնանորոգված շենքում նորարարական գրադարան ունենալու ծրագիրը, գրադարանի նախագիծը, ներդրվող ծրագրերը և քննարկել ծրագրի հետ կապված մանրամասներ:

«Խնդիրներին ծանոթացել ենք արդեն: Նախատեսում ենք ԱրՊՀ աշխատակազմից մի քանի հոգու հետ վերապատրաստման դասընթացներ անցկացնել ՀԱՀ-ում՝ ներդրվող ծրագրերի հետ կապված հմտություններ փոխանցելու նպատակով: Անչափ ոգևորված եմ, որ ԱրՊՀ-ն կունենա նոր շենք, նոր գրադարան և պատրաստ եմ իմ աջակցությունը ցուցաբերել այս գործում»,-նշել է Ս. Ավագյանը՝ տեղեկացնելով, որ ՀԱՀ-ն գրքերի մի խմբաքանակ արդեն նվիրել է ԱրՊՀ-ին, կկատարվի գրքերի թվայնացում, կներդրվի «Կոհա» համակարգը, կգործի էլեկտրոնային սպասարկման համակարգ, ԱրՊՀ-ն կունենա նորարարական չափանիշներին համապատասխանող գրադարան, ինչը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

«Հայաստանի ամերիկյան համալսարանն ուզում է աջակցել ԱրՊՀ-ին: Մեր թիմն այստեղ է՝ հասկանալու համար, թե ցանցային սպասարկման մասով ինչ տեխնիկական սարքավորումներ և ինչ ծրագրեր են անհրաժեշտ, որպեսզի հնարավորության սահմաններում աջակցենք»,-նշել է ՀԱՀ ՏՏ ոլորտի մասնագետ Գ. Սարգսյանը:

ՀԱՀ ներկայացուցիչները շրջել են հիմնանորոգված մասնաշենքում, քննարկումներ ունեցել առանձին ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, նախանշել անելիքները:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 04 (241)
մայիս - 2022

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ ԱՐՊՀ-ՈՒՄ

Մայիսի 6-ին Արցախի պետական համալսարան են այցելել Արցախի Հանրապետության ՊՆ, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Կամո Վարդանյանը, ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, ՊԲ հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, գնդապետ Նորայր Մկրտչյանը և Մայիսյան եռատոնի առթիվ ավանդական դարձած Արիության դաս անցկացրել համալսարանականների համար:

Պատերազմներում անմահացած հերոսների հիշատակը ներկաները հարգել են լռության րոպեով:

Ողջունելով ներկաներին ու շնորհակալություն հայտնելով հյուրերին՝ ԱրՊՀ այցելելու և դասախոսությամբ հանդես գալու համար՝ ռեկտորը կարևորել է հայ ժողովրդի համար մայիսյան տոների խորհուրդն ու յուրաքանչյուր տարի այն արժևորելը:

«Երբեք ոչ մեկս չպետք է վհատվենք և երբեք չպետք է կորցնենք Մայիսյան եռատոնի խորհուրդը: Լիահույս եմ, որ մենք դեռ մեծ շուքով եռատոն նշելու հնարավորություն ենք ունենալու»,-նշել է ռեկտոր Արմեն Սարգսյանը:

Արցախի Հանրապետության ՊՆ, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Կամո Վարդանյանը ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում ներկայացրել է Արցախում տիրող ռազմաքաղաքական իրադրությունը, մարտահրավերներն ու սպառնալիքները, դրանց դիմակայելու ուղիներն ու ՊԲ կողմից իրականացվող ընթացիկ աշխատանքները:

«Գիտակցելով սպառնալիքները՝ մենք պետք է ամուր պահենք մեր սահմանները, բնագծերը, ունենանք ժամանակակից պահանջներին համապատասխանող սպառազինված բանակ: Այսօր իրականացվում են աշխատանքներ բանակի մարտունակության զարգացման ուղղությամբ: Սա պետք է լինի գերակա խնդիր ոչ միայն Արցախի ու Հայաստանի, այլև՝ համայն հայության համար»,-ընդգծել է նախարարը՝ շեշտելով ՌԴ խաղաղապահ զորակազմի դերը անվտանգության պահպանման գործում:

«Համագործակցելով ՌԴ խաղաղապահ ուժերի հետ՝ մեզ կհաջողվի դիմակայել սպառնալիքները, հաղթահարել դժվարությունները: Հակառակորդի կողմից մեր դեմ իրականացվող սադրիչ գործողությունները չեն կարող խոչընդոտել մեր աշխատանքներին, մենք կշարունակենք ապրել ու արարել մեր հողում ու շենացնել Արցախը»,-եզրափակել է իր խոսքը Կ. Վարդանյանը՝ վստահություն հայտնելով և կոչ անելով երբեք չկոտրվել, տրամադրվել լավատեսորեն և դրսևորել ամուր կամք:

ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանն իր խոսքում, պատմական անդրադարձ կատարելով Ավարայրի ճակատամարտին ու այդ ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրողություններին, զուգահեռներ անցկացրեց ժամանակակից իրողությունների հետ՝ շեշտելով բարոյական հաղթանակի գիտակցման դերը հետագա լիարժեք հաղթանակները կերտելու գործում:

«Բոլորս գիտենք՝ ինչ իրավիճակում ենք հայտնվել 2020 թ. սեպտեմբերի 27-ին բռնկված պատերազմից հետո: Մենք պարտվել ենք ոչ թե Ադրբեջանին, այլ՝ աշխարհի հզոր ռազմաքաղաքական ուժերին: Մենք չենք կարող ժխտել Մայիսյան հերոսամարտերը՝ չնայած ոչ բոլոր հերոսամարտերում ենք հաղթել, բայց արդյունքում ունեցել ենք պետականության վերականգնում՝ Հայաստանի առաջին հանրապետության ծնունդ, Շուշիի ազատագրում»,-ընդգծել է նախարարը՝ հորդորելով երբեք չհուսահատվել դժվար իրավիճակներում և հույս հայտնել, որ ճիշտ աշխատելու դեպքում կունենանք հզոր երկիր:

ԿԱՅԱՑԵԼ Է ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Մայիսի 12-ից 13-ը ԱրՊՀ-ում կայացել է 44-օրյա պատերազմում նահատակված ուսանող-ազատամարտիկների հիշատակին նվիրված ուսանողական գիտաժողով, որին մասնակցել են 125-ից ավելի պատվիրակներ Արցախի և ՀՀ առաջատար բուհերից:

Գիտաժողովի լիագումար նիստին ներկա էին ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, պաշտոնատար անձինք, ներկայացուցիչներ ՀՀ բուհերի ղեկավար կազմերից, դասախոսներ, ուսանողներ:

Գիտաժողովը մեկնարկել է լռության րոպեով՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմի զոհերի:

Լիագումար նիստին մասնակիցներին ողջունել և գիտաժողովի աշխատանքները կարևորել է ռեկտոր Արմեն Սարգսյանը՝ ընդգծելով գիտաժողովի նշանակությունը բուհի կրթագիտական կյանքի զարգացմանն ուղղված աշխատանքների և միջբուհական համագործակցության ամրապնդման տեսանկյունից:

«Գիտխորհրդի որոշմամբ այս վերջին երկու տարիների մեր բոլոր միջոցառումները նվիրված են 44-օրյա պատերազմում անմահացած մեր հերոս ուսանողներին: Մեր 26 ուսանողներ 44-օրյա պատերազմում նահատակվեցին հանուն հայրենիքի, որ ապրի հայրենիքը, որ ապրենք մենք, որ շարունակվի ուսումնական գործընթացը»,-նշել է ռեկտորը:

Ողջույնի խոսքով հանդես են եկել ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Ղազինյանը, Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Թեհմինա Մարությանը:

«Գիտաժողովը նվիրված է զոհված ուսանողների հիշատակին, ուստի այն և՛ գիտական, և՛ բարոյական միջոցառում է, որը լրացուցիչ պարտավորություններ է մեր առջև դնում՝ լրացուցիչ անգամ հիշեցնելով, թե ինչպես պետք է ապրել, սովորել, աշխատել, ինչ նպատակներով, ինչ առաքելությամբ: Մենք մեր զոհված ազատամարտիկների հիշատակի առջև պարտավոր ենք, որպեսզի ապրենք այնպես, ինչպես նրանք կերազեին, որ մենք ապրեինք: Ապրենք դասեր քաղելով, այդ թվում՝ նախապատերազմյան, պատերազմյան ընթացքից»,-ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ նշել է ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը՝ հավելելով, որ յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ ուսանողները, գիտնականները, իրենց բաժին գործն ունեն անելու, բոլոր ուղղություններով շատ ավելի լավ, առաջին հերթին՝ որպես քաղաքացիներ, երկրորդ հերթին՝ որպես մասնագետներ:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանն իր խոսքում անդրադարձավ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով կրթական ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրներին՝ կարևորելով գիտաժողովի նշանակությունը:

«Չնայած բոլոր վերելքներին ու վայրէջքներին՝ Արցախը բոլոր քաղաքական իրավիճակներում էլ կա, պահպանել ու պահպանելու է իր քաղաքական դեմքն ու նշանակությունը»,- նշել է նախարարը՝ շնորհակալություն հայտնելով գիտաժողովը նախաձեռնողներին, կազմակերպիչներին ու մասնակիցներին՝ մաղթելով արդյունավետ աշխատանք:

➥ 3

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 16-ից 20-ը Արցախի պետական համալսարանում կազմակերպվել են ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները:

Ըստ ԱրՊՀ ուսումնական աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Իրենա Խաչատրյանի՝ 2021-2022 ուստարում Մայր բուհն ավարտում է 484 ուսանող, որից բակալավրիատի առկա ուսուցման համակարգը՝ 247, հեռակա ուսուցման համակարգը՝ 109, իսկ մագիստրատուրան՝ 128 ուսանող:

ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանի խոսքով՝ բոլոր անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են՝ քննաշրջանը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

«Այս տարի նախապես բոլոր ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերն ուղարկել ենք հանձնաժողովի նախագահներին, որպեսզի նախապես ծանոթանան աշխատանքներին, և կարողանան ավելի օբյեկտիվ գնահատել դրանք»,-ասել է Գ. Սահակյանը՝ հավելելով, որ գործընթացն ընթացել է բնականոն հունով, էական խնդիրներ չեն արձանագրվել:

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Լուսինե Մարգարյանի խոսքով՝ բոլոր նրանց համար, ովքեր ավարտական խմբերում ամփոփիչ որակավորման քննությունների պետք է մասնակցեն, կազմակերպվել են մեկշաբաթյա խորհրդատվական ժամեր, ևս մեկ անգամ քննարկվել են հարցատոմսերում ընդգրկված անհասկանալի հարցերը:

«Բավականին բարդ ժամանակահատված է բաժին հասել այս տարվա շրջանավարտներին: Կարծում եմ, որ մեծ դժվարությամբ և մեծ ծանրությամբ ենք համավարակի և պատերազմի շրջանները հաղթահարել, բայց այսօր արդյունքները պետք է, որ չամաչեցնեն մեզ»,-ընդհանրացրել է Լ. Մարգարյանը:

Հանձնաժողովների նախագահները գոհունակություն են հայտնել արդյունքներից, յուրաքանչյուր մասնագիտության ուղղությամբ ներկայացրել առաջարկություններ՝ որակի շարունակական բարելավման նպատակով:

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԵՏ

«Համաշխարհային քաղաքակրթությունների պատմություն» դասընթացի շրջանակներում մայիսի 5-ին ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողները, պատմության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս Էլինա Մխիթարյանի նախաձեռնությամբ հանդիպել են Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի հետ:

Հանդիպումը կրում էր «Օմբուդսմանի ինստիտուտը՝ որպես համաշխարհային քաղաքակրթությունները միավորող կառույց» խորագիրը: Պաշտպանը պատմական ակնարկով անդրադարձավ մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի ներդրման փորձերին՝ ժամանակագրորեն ներկայացնելով տարբեր երկրների ձևաչափերը: Պարզաբանելով աշխարհի տարբեր պետություններում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգայնորեն ներդրված մեխանիզմները՝ ի դեմս օմբուդսմանի հաստատության առանձնահատկությունների, Գ. Ստեփանյանը ներկայացրեց Արցախի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեությունը, Արցախում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավիճակը:

Ուսանողներն իրենց հարցադրումներն ուղղեցին Պաշտպանին՝ Միջազգային կառույցների և իրավապաշտպան կազմակերպությունների հետ համագործակցությամբ Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության, թուրք-ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության վերաբերյալ՝ ստանալով մանրամասն բացատրություններ:

Ուսանողներին հնարավորություն ընձեռվեց ծանոթանալ Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի, աշխատակազմի առանձին կառուցվածքային միավորների գործունեությանը:

Հանդիպումն ամփոփվել է հաճելի անակնկալով. ուսանողները ՄԻՊ-ի կողմից ստացել են հուշանվերներ:

ԵՊՀ պատվիրակության անունից գիտաժողովի մասնակիցներին ողջունել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Ղազինյանը:

«Կարևորում եմ գիտաժողովի աշխատանքները, որոնք մեծապես նպաստում են ուսանողների կայացմանը՝ որպես մասնագետ, որպես քաղաքացի: Նշանակալից է այսօրվա միջոցառումը, քանի որ նվիրված է մեր հերոս տղաների հիշատակին և ավելի է պարտավորեցնում, որովհետև նրանք զոհվել են բոլորիս համար»,-նշել է Գ. Ղազինյանը՝ հույս հայտնելով, որ առկա դժվարությունները համատեղ ուժերով կարողանալու են հաղթահարել:

«Արցախի պետական համալսարանը գործադրում է բոլոր ջանքերը, որպեսզի հերոս տղաների հերոսական ոգին միշտ լինի թելադրող, ուղղորդող: Այդ ոգին պետք է հունդեր գցի նոր սերնդի կողքին: Պատերազմից հետո համակած ճգնաժամը, ցավը պետք է հաղթահարել անդուլ աշխատանքով, ցավի կողքին բացահայտել ներուժ և վերածել ձեռքբերումների: Որքան ամուր լինի Արցախը, այնքան ամուր կլինի նաև Սյունիքը, Արցախը մեր թիկունքն է, մեր պետականության խորհրդանիշն է»,-ընդգծել է Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Թեհմինա Մարությանը՝ կարևորելով գիտաժողովը նաև ուսանողների գիտական ներուժը բացահայտելու տեսանկյունից:

Լիագումար նիստին զեկուցումներով հանդես են եկել ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը (Թեմա՝ Ուսանողների հետ տարվող աշխատանքները ԱրՊՀ-ում), Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանող Դավիթ Սերոբյանը (Թուրքական ինքնությունը և հայոց ցեղասպանության ժխտումը), Հայ-ռուսական համալսարանի ուսանող Վիլեն Մնացականյանը (Внешнеторговое взаимодействие и перспективы развития отнишения Армении и Исламской Республики Иран), Արցախի պետական համալսարանի ուսանող Սոնա Մուսայելյանը (Հիշողություն-մոռացություն-պայքար կոնցեպցիան էլիֆ Շաֆաքի «Ստամբուլի բիճը» վեպում):

ՎԻՏՅԱ ՅԱՐԱՄԻՇՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է «ՈՍԿԵ ՄԵԴԱԼ»

Մայիսի 5-ին կայացած ԱրՊՀ գիտխորհրդի նիստում որոշում էր կայացվել համալսարանի զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանին շնորհել «Ոսկե մեդալ»:

Մայիսի 13-ին՝ ուսանողական գիտաժողովի փակման արարողության ընթացքում, հանդիսավոր պայմաններում ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը «Ոսկե մեդալ»-ը հանձնել է Վիտյա Յարամիշյանին:

Վ. Յարամիշյանը շնորհակալություն է հայտնել գիտխորհրդի կազմին և ռեկտորին՝ իր աշխատանքը գնահատելու համար:

«Մարդկային առաքինություններից ամենավեհը հայրենիքին ծառայելն է: Այդ վեհ առաքելությունն իրականացրել են մեր նահատակված տղաները: Ցավն ու համընդհանուր ծանր իրավիճակը հաղթահարելու ելքը շատ աշխատելն է, համախմբվելը հանուն ընդհանուր նպատակի»,- մասնավորապես նշել է Վ. Յարամիշյանը՝ ընդգծելով, որ այդ պարգևը իր, գործընկերների և ուսանողների համատեղ կատարած աշխատանքի գնահատականն է:

ԵՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՊՀ-ՈՒՄ



Մայիսի 10-ին Արցախի պետական համալսարան է այցելել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պատվիրակությունը՝ դեկան, ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Ղազինյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին նաև ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Սամվել Դիլբանդյանը, քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Արմեն Հայկյանցը, ֆակուլտետի դասախոսներ:

Դեռևս 2017 թ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի միջև կնքվել էր համագործակցության հուշագիր, որը նպատակ ունի նպաստել ԱրՊՀ-ում իրավաբանական կրթության կատարելագործմանը: Այցը համագործակցության հուշագրի շրջանակում է, որի ընթացքում ԵՊՀ մասնագետները ԱրՊՀ-ին են նվիրել մասնագիտական գրականություն և «Իրավագիտություն» կրթական ծրագրով սովորողների համար հանդես եկել դասախոսություններով:

ԱրՊՀ իրավագիտության ամբիոնի կայացման, մասնագիտական աջակցություն ցուցաբերելու և առհասարակ Արցախի պետական համալսարանի զարգացման գործում ունեցած ավանդի համար մայիսի 5-ին կայացած գիտական խորհրդի նիստում որոշում էր կայացվել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանին շնորհել ԱրՊՀ «Պատվավոր դոկտոր»-ի կոչում:

Ողջունելով ԵՊՀ պատվիրակությանը և շնորհակալություն հայտնելով նրանց՝ համագործակցությունն ակտիվ ու կենսունակ պահելու համար՝ ռեկտորը կարևորել է այդ գործակցության ուղղություններն ու դրանց ընդլայնումը նաև ակադեմիական շարժունության շրջանակներում ուսանողների փոխանակման ծրագրի իրագործման տեսանկյունից:

«Մեծ է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դերը ԱրՊՀ համապատասխան ամբիոնը բարձրորակ կադրերով համալրելու գործում, մասնագիտությունը զարգացնելու, դասախոսություններով պարբերաբար հանդես գալու, մասնագիտական գրականության աջակցության հարցերում: Այս բոլոր ձեռնարկումներում անուրանալի է պրոֆեսոր Գագիկ Ղազինյանի ներդրումը: Հաշվի առնելով այդ մեծ ավանդը՝ ԱրՊՀ գիտխորհուրդը իր գնահատանքը արտահայտել է Գ.Ղազինյանին «Պատվավոր դոկտոր»-ի կոչում շնորհելով»,-նշել է ռեկտորը:

Իր հերթին Գագիկ Ղազինյանը, ողջունելով ներկաներին, շնորհակալություն է հայտնել ԱրՊՀ «Պատվավոր դոկտոր»-ի կոչում շնորհելու համար՝ ընդգծելով, որ իր գործընկերների հետ ամենայն պատրաստակամությամբ են այցելում Արցախի պետական համալսարան և ծրագրեր իրականացնում:

«Մեզնից յուրաքանչյուրի համար Արցախում լինելը հոգու կանչ է և պարտականություն: Համագործակցության հուշագրի շրջանակում մեր ծրագրերը իրավական հիմքեր ունեն, իսկ հուշագրից դուրս՝ այն ունի նաև բարոյական հիմքեր: Մենք մեր ուժերի չափով միշտ ԱրՊՀ կողքին ենք, պատրաստ՝ և՛ մասնագիտական աջակցություն ցուցաբերելու, և՛ գրականությամբ օժանդակելու, և այն ամենով, ինչով կկարողանանք»,-նշել է Գ. Ղազինյանը:

Պրոֆեսոր Գագիկ Ղազինյանին շնորհավորել և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հետ համագործակցությունը բարձր են գնահատել իրենց ելույթներում ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը և իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ. Տաթևիկ Գևորգյանը:

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈ

Արցախի պետական համալսարանից 44-օրյա պատերազմում հավերժի ճամփորդ են դարձել 26 ուսանողներ: Գիտական խորհրդի որոշմամբ պատերազմից հետո համալսարանի բոլոր միջոցառումները նվիրվում են անմահացած ուսանողների հիշատակին:

Արցախյան առաջին պատերազմում անմահացած 72 ազատամարտիկներին նվիրված հուշակոթողը վերափոխվել է, համալրվել է ապրիլյան և 44-օրյա պատերազմներում անմահացած ուսանողների լուսանկարներով: Նահատակվածների հիշատակին համալսարանին պատկանող՝ Պատարայի մերձակայքի ուսումնական գոտում կառուցվում է հուշաղբյուր, հրատարակվել է նրանց կենսապատումն ամփոփող «Ձեզ բացակա չենք դնի» գիրքը, պաշտոնական կայքում բացվել է նրանց կենսագրությունն ու լուսանկարները նեկայացնող «Ձեզ բացակա չենք դնի» բաժինը:

Մայիսի 12-ին ԱրՊՀ զոհված ուսանող ազատամարտիկներին նվիրված հուշակոթողի մոտ տեղի է ունեցել խոնարհման ու հիշատակի արարողություն, որին ներկա էին անմահացած ուսանողների հարազատները, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ուսանողական գիտաժողովի պատվիրակներ:

Ներկաները ծաղիկներ են խոնարհել հուշակոթողին՝ հարգելով նրանց անմար հիշատակը:

ԱրՊՀ ռեկտորը շնորհակալություն է հայտնել նահատակված ուսանողների ծնողներին ու հարազատներին՝ հերոս զավակներ ծնելու և դաստիարակելու համար. «Նրանք նահատակվեցին, որպեսզի նորից հնչի զանգը արցախյան կրթօջախներում: Մեր հերոս տղաների շնորհիվ է, որ այսօր կանք, ապրում է Արցախը, փառք ու պատիվ մեր հերոս տղաներին»,-նշել է ռեկտորը:

Արմեն Սարգսյանը անմահացած ուսանողների ծնողներին է նվիրել նաև ԱրՊՀ կողմից հրատարակված «Ձեզ բացակա չենք դնի» գրքերից:

Զոհված ուսանողի հայր, «Արցախյան 3-րդ պատերազմում զոհված և անհայտ կորած զինծառայողների հարազատների միություն» ՀԿ նախագահ Արմեն Ասրյանը շնորհակալություն է հայտնել ԱրՊՀ-ին՝ կազմակերպված միջոցառման համար:

«Մենք պարտավոր ենք մշտապես վառ պահել նրանց հիշատակը, նրանց կատարած սխրագործությունները սերնդեսերունդ փոխանցել: Այսօր կյանքը շարունակվում է, կազմավորվում են նոր ընտանիքներ, ծնվում են բալիկներ, բայց բոլորս պիտի գիտակցենք դրա դիմաց վճարված գինը, հիշել մեր տղաներին, ապրել, արարել նրանց արժանավայել կերպով»,-նշել է Արմեն Ասրյանը՝ ժամանակակից աշխարհաքաղաքական իրավիճակում կարևորելով ժողովրդի միասնության անհրաժեշտությունը:

Բացման խոսքով հանդես է եկել բուհի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը:

«Արցախը, որը միշտ էլ եղել է հայոց համազգային պայքարի կարևոր օղակներից մեկը, հանդիսացել է պետականության պահպանման համար մղվող պայքարի օջախը: Համալսարանի սանը իր երդումը տալիս է տղաների պատվին կառուցված հուշակոթողի առջև, և երդվում լինել նրանց արժանի, համալսարանի դասախոսն իր քայլերն ուղղում է դեպի լսարան այն պարտքի գիտակցմամբ, որ պետք է հերոսներին արժանի սերունդ կրթի ու դաստիարակի»,-ասել է Ա. Խաչատրյանը

Միջոցառման ընթացքում ցուցադրվել են 44-օրյայում անմահացած ուսանողների լուսանկարները, պատմել դրվագներ նրանց հերոսական կենսագրությունից, հնչել են ելույթներ՝ մեկ անգամ ևս արժևորելով հավերժի ճամփորդ դարձած ուսանողների սխրանքը: